ՆՈՐ-ԴԱՐ

№ 148 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 23 Օգոստոսի 1896 Ուրբաթ 23 Օգոստոսի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 148

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների տողին 2 կ., բոլորների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Կ. Պոլսի անցքերը:
Պարսից դատաւորները:
Քրոնիկոն. —«Моск. Вѣд.»-ի խմբագիրը Պոլսում: Նոր տեսչութիւն Փինլանդիայի դպրոցներում: Կովկասի Թէյը Նիժ.-Նովգ.-ի ցուցահանդէսում: Զին. պրտօնութիւնների փոփոխութիւնը: Սիրներ և Սմարագդին Կովկասում: Գործ. արդիւնաբերութիւնների ցուցահանդէս Թիֆլիսում: Մոսկ. համալս. պարապմունքները: Հանքային բնախտաւոր հարցը հայ: Ռուսիայում: Խարկովի 250-ամեակը: Մեքենագէտների դպրոց Բաքւում: Նաւերի պատուէր: Գիւղատնտ. մեքենաների մաքսի իջեցման խնդիրը: Կալուածատէր իշխ. Ռոստովցին Ռոստովում: Կաւկազի մի հերքում:
Թղթակցութիւններ.— Բանոց: Միսկինջի:
Քաղաքական. Թրքական գործերը:
Խառնուրդ:
Հեռագիրներ:
«Նոր-Դար»-ի պատասխանները:
Բանասիրական.—Մի տնտեսական խնդիր:
Տեղեկատու:
Յայտարարութիւն:

Կ. ՊՈԼՍԻ ԱՆՑՔԵՐԸ

(«Ռուս. գործ.» հեռագրեր)

ՓԻԼԻՊՊՈՊՈԼ, 20 օգոստոսի.—Կ. Պոլսից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ հայ յեղափոխական մասնաժողովը օգոստոսի 18-ին Դրանը յայտարարել է, որ եթէ, երկու ժամից յետոյ չի դադարել անմեղների կոտորածը, այնժամանակ մասնաժողովի յեղափոխական գործողութիւնը կկրկնապատէ նոր ուժով: Նոյնպիսի մի յայտարարութիւն տուել են և բոլոր դեսպանները:

Կ. ՊՈԼԻՍ, 19 օգոստոսի.—Երէկ չէ՝ միւս օր, այնժամանակ, երբ երեք դեսպանատների թարգմաններ պաշտօնական գործերով գնում էին Եըլտըզ-Քէօշկ, ճանապարհի վրայ, Դոլմա-Բաղչէի շրջակայքում չորս թուրք յարձակուեցին մի հայի վրայ և սպանեցին նրան: Ռուսաց դեսպանատան թարգման Մաքսիմովը, կառքից ցած թռչելով, դիմեց տեղի չարագործներին և ստիպեց նրանց մօտակայ ոստիկանատունը: Իսկ երբ ոստիկանատունը հրաժարուեց բանտել մարդասպաններին, այնժամանակ Մաքսիմովը ինչպէս մարդասպաններին, այնպէս և նրանց ձերբակալելուց հրաժարուող ոստիկանական կոմիսարին ուղարկեց Եըլտըզ-Քէօշկ, ուր բացայայտուեցաւ, որ չարագործներից մէկը պալատական պաշտօնեայ է:

Ինչպէս երևում է բացայայտուած զանազան հանգամանքներից, երէկ չէ՝ միւս օր եղած ռումբի պայթումը վերագրւում է թուրքերին, որոնք ցանկացել են արդարացնել հայերի հալածանքը և աւելի ևս գրգռել ամբոխին: Հաստատ իրողութիւն է, որ «չարշաբթի օրը» ոստիկանութիւնը սպասում էր հայերի կողմից բանի գործողութիւններ և ամբոխին նախօրէն խորհուրդ էր տուել պատրաստ լինել հայերին հալածելու համար:

Կ. Պոլսի տեղապահ զօրքի վրայ աւելացրած է չորս բատալիոն: Դեսպանները զինուորական պաշտպանութիւն են պահանջել Թերապիայի համար: Այդ պահանջը կատարուած է:

Վերջին անցքերի պատճառով, սպասում է, որ զինուորական մինիստրը պաշտօնից արձակուի. նրան յաջորդ անուանում են Կրետէի զօրքերի նախկին հրամանատար Աբդուլլա-փաշային:

Օգոստոսի 18-ի օրը հանգիստ անցաւ, և շատ առևտրական հաստատութիւններ նորից բացուեցան: Փողոցների տեսքը լաւացաւ, խմբումներ չկային: Երեկոյեան Ղալաթայում պատահած մի քանի դէպքեր վառացրին գրաւեցին: Օսմանեան բանկի հին շինութեան մօտ ամբոխը ծառայութիւնից ազատ ծովային զինուորների օգնութեամբ յարձակուեց մի հայ տան վրայ, քարուքանդ արեց այն, սպանեց այդ մարդկանց, լուսամուտներից դուրս շպրտեց կանանց և երեխաներին: Զօրքերը և ոստիկանութիւնն անտարբեր էին: Բանկի դիմաց գտնուող առևտրական շինութեան միջից, ինչպէս լսւում է, ռումբ է ձգուած, իսկ յետոյ ատրճանակներից գնդակներ են տեղացել զօրքերի վրայ, որոնք պատասխանել են հրացանաձգութեամբ և զէնքերձեռին տիրել են հայերի պաշարած շինութեանը: Մի ուրիշ առևտրական շինութիւնից նոյնպէս հրազէններ են պարպել զօրքերի վրայ: Զօրքերը պատասխանել են հրացանաձգութեամբ, բայց ասենք ներս չեն խուժել: Վերջին երկու դէպքերի ժամանակ զօրքերն իրենց լաւ են պահել: Ձերբակալուած է 30 հայ: Վիրաւորուած են 1 սպայ և 2 զինուոր:

Զոհերի ընդհանուր թիւն արդէն հաշւում են մի քանի հազար, դրանց թւում մօտ 60 մահմեդական:

Վէհբի-փաշան նշանակուած է Պէրայի բերդապահ, մարշալ Զաքիր-փաշան Ղալաթայի բերդապահ: Զինուորական միջոցները սաստկացրած են: Մի արտակարգ յանձնաժողով, որին գլուխ է անցած Զիւլֆի-բէյը, նպատակ է ունենում արդարադատութեան մինիստրութեան մէջ դատելու համար այն մահմեդականներին, որոնք յանցաւոր են հայերի վրայ գործած բռնութիւնների մէջ: Մինչև այժմ ձերբակալուած է 400 հոգի:

Օգոստոսի 18-ի օրը և գիշերը խաղաղ անցան:

Մայրաքաղաքի թերթերի մէջ «Ռուս. գործ.»-ը հետևեալ մանրամասնութիւնը է հաղորդում Կ. Պոլսի անցքերի մասին.

Կ. ՊՈԼԻՍ, 15 օգոստոսի.—Պէտք է ասել, որ գրգռուած մահմեդական բնակիչները ձեռք չէին տալիս ուրիշ օտարազգի անձերին, որոնք անկարգութիւնների ժամանակ գտնւում էին փողոցներում: Այսօր օսմանեան բանկում գործերը կըսկսուեին:

Կ. ՊՈԼԻՍ, 16 օգոստոսի.—Այսօր առաւօտեան մահմեդական ամբոխը ներս խուժեց երկաթուղու կայարանը Ստամբուլում և կայարանի առաջ հրապարակի վրայ սպանեց 21 հոգի հայ արհեստաւորներ և բեռնակիրներ: Բացի դրանից, սպանուած է և մի մեքենավար: Զարկուած են նմանապէս շատ հայ բեռնակիրներ, որոնք անգլիական նաւից դուրս էին կրում երկաթուղային ընկերութեան համար նշանակուած ածուխը: Այդ բեռնակիրների հետամուտ լինելով, ամբոխը, չնայելով կապիտանի բողոքին, ներս խուժեց նաև նաւը: Երկաթուղային ծառայողների մէջ ահ ու սարսափ տարածուեց: Մեծ մասն սկսեց փախչել: Սակայն երկաթուղային հաղորդակցութիւնը չդադարեց:

Օսմանեան բանկին տիրող հայերը բանակցութիւնների ժամանակ յայտարարեցին, թէ իրենք բանկն ընտրել են նրա համար, որ դա ամենայարմար տեղն է ցոյցի համար: Նրանք հետևեալ պայմանները առաջարկեցին. դինամիտի ռումբերը կյանձնեն, բայց ատրճանակները կպահեն իրենց մօտ: Անգլիական ֆրանսիական և ռուսաց դեսպանատ-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(«Նոր-Դար»-ի Պարիզի թղթակցից)

—

Հազիւ 1896-ի մարտի 29-ի մարդահամարի արդիւնքը յայտնի եղաւ, որ ֆրանսիական ամբողջ մամուլը ողբի աղաղակ սկսեց բարձրացնել: Ֆրանսիան՝ որ բնակիչների թւի կողմից հարիւր տարի առաջ առաջին տեղն էր բռնում Եւրոպայում, այժմ հազիւ հինգերորդ տեղն ունի: Եթէ իրերի դրութիւնը այսպէս շարունակուի, այն ժամանակ մի քանի տարուց յետոյ Ֆրանսիան բնակիչների թւի կողմից երկրորդական պետութեանց շարքը պիտի մտնի: Հրապարակախօսներից միքանիսը փաստ ի ձեռին պնդում են, որ 1905-ին Ֆրանսիան զօրաւոր մեծ ազգերի արտամարը կարող է դառնալ: Հայրենիքի աստիճանաբար ցածրացման պատկերը շատ բնական է որ հայրենասէր սրտերին անհանգստութիւն պիտի պատճառէր:—Հասարակական կարծիքը յուզուելու իրաւունք ունի, որովհետև վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ֆրանսիան 1886-ի մարդահամարով 563,380 հոգի է աւելորդ ունեցած 1881-ի վրայ: Հինգ տարի յետոյ եղած 1891 ինը՝ 208,581 հոգի միայն աւելորդ է տուել. իսկ ներկայ մարդահամարը 1891-ի վրայ աւելորդ է տուել՝ 133,819: Ուրեմն ծնունդի, աճման թիւը աստիճան առ աստիճան պակասում է: Արդ, եթէ Ֆրանսիան տասնեակ տարիներ շարունակ այս գծով ընթանայ, ակներև է որ բնակիչների թւի կողմից նա գնալով հերթով պիտի փոքրանայ:

Վերջին վիճակագրութիւնը ցոյց է տուել նաև, որ պանդխտութեան հոսանքը դէպի քաղաքներն և գործարանական կեդրոնները անընդհատաբար շարունակւում ու յառաջ է գնում աւելի ու աւելի: Մահուան և ծնունդի միջև աւելորդ ոչ թէ գիւղերն են տալիս, այլ քաղաքները. միւս կողմից քաղաքների բնակիչների աճումը չի արգելում, որ միևնոյն նահանգի բնակիչների թիւը նուազի: Ուրեմն երբ մի կողմից գիւղերը դատարկւում են յօգուտ քաղաքների, միւս կողմից քաղաքների աճումն ընդհանուր ծնունդի պակասութիւնը չի փոխարինում:

Փաստը ցոյց է տալիս, որ Ֆրանսիան հինգ տարուայ ընթացքում միմիայն 133,819 աւելորդ է ունեցել, տալ է թէ տարին 26,780 հոգի: Այս թւի մէջ պիտի հաշուել և այն բազմաթիւ օտարականներին, որոնք ամեն տարի հազարներով ֆրանսիահպատակութիւն են ընդունում: Եթէ վիճակագրութեան վրայ հիմնուելով չի կարելի բացարձակ կերպով ասել, որ Ֆրանսիայում մահը հաւասար է ծնունդին, փոքրիկ աւելորդի պատճառով, բայց ակներև է, որ Ֆրանսիան աճման տեսակէտով գտնւում է կանգուն (stationnaire, —կայանուոր) դրութեան մէջ: Տնտեսական այդ բառը ամեն ինչ ճշգրիտ կերպով պարզում է:

Որքան որ հարևան ժողովուրդների արագ աճումը անհանգստութեան տեղիք է տալիս վիճակագրութիւնը կարդալ գիտցողներին, նոյնքան, գուցէ և աւելի, հրապարակախօսներին անհանգստացնում է կանգուն դրութեան առեղծուած ապագան:

Ներկայ պայմանների մէջ, կանգուն դրութիւն ունեցող երկիրները բացարձակապէս վտանգի մէջ են գտնւում և այդ վտանգն աւելի բացայայտ կլինի ոչ միայն բնակիչների աճումը, այլ մրցող ազգերի բնակութեան տարածութիւնը ևս իրարու հետ համեմատելով: Ֆրանսիան իւրաքանչիւր քառակուսի քիլոմետր տարածութեան վրայ ունի մօտ 72 բնակիչ: Գերմանիան, որ հողի յատկութեան կողմից շատ ստոր է Ֆրանսիայից, բայց իւր հանքային հարստութեամբ աւելի բարձր, 86 բնակիչ ունի: Իտալիայի հողը դեռ շատ տեղ մշակուած չէ, թէև ժողովրդի մի մասը վերջին աստիճանի թշուառ դրութեան մէջ է, այնուամենայնիւ իւրաքանչիւր քառակուսի քիլոմետրի վրայ նա ունի 102-ից մինչև 103 բնակիչ: Անգլիայի ճարտարագործութիւնը հսկայական է և այդ կողմից իւր մթերանոցները մրցակիցներ չունին. Իռլանդիան հետը հաշուելով նա 106 հոգի ունի մի քառակուսի քիլոմետրի վրայ, իսկ բուն Անգլիան 190 հոգի:

Ուրեմն ոչ միայն աճման կողմից է Ֆրանսիան անհամեմատաբար թոյլ, այլ բնակիչների խտութեան կողմից ևս նա տեղի է տալիս:

Ազգերի ներկայ դրութեան մէջ նախ բարեգուշակ չի կարող լինել որ մի ազգ աճման տեսակէտից կանգ առնի, քանի որ իւր բնական երկրի ընդարձակութիւնն իսկ բազմացման միջոց է տալիս: Ներկայ հանգամանքի մէջ կանգ առնելը աղէտալի հետևանք կարող է ունենալ, որովհետև նա քաղաքական աստիճանական անկման յայտնի նշան է: Ուրեմն երբ մի կողմից հարևանները ամենաարագ կերպով աճում, բազմանում են, միւս կողմից Ֆրանսիան օրէցօր թուլանում, փոքրանում է:

Այստեղ կողմնակի կերպով հարկաւոր է նկատել, որ պետութեանց քաղաքական դրութիւնը ահագին ազդեցութիւն ունի և՝ նրանց արդիւնագործութեան ընդարձակման ու գնի վրայ: Քաղաքականապէս զօրեղ, ազդեցութիւն ունեցող ազգը օտար յաճախորդների աւելի մեծ թիւ ունենալու պայմաններ ունի:

Երկրորդ՝ չաճող երկիրը շատ մեծ թուով պանդուխտներ արտադրել չի կարող, որպէսզի սրանք հեռաւոր երկրներ տանեն մայր հայրենիքի քաղաքակրթութիւնը, բարք ու վարքը, ճաշակը, լեզուն, գրականութիւնը, և այլ այն բոլորը, որոնք միացուցիչ գիծ պիտի կազմեն նախկին և նոր հայրենիքի մէջ: Անգլիան, մեր օրերում Գերմանիան, պանդուխտներին է պարտական իւր ձեռք բերած արտաքին ազդեցութիւնը:

Երրորդ՝ պատմութիւնը որոշակի կերպով ցոյց է տալիս, որ կանգուն դրութեան մէջ գտնուող ժողովուրդը տակաւ առ տակաւ սկսում է նուազել, տկարանալ, թուլանալ, կնամարդ դառնալ: Փոքրաթիւ ընտանիքների մէջ մեծացած երեխաները սովորաբար փոքրոգի են դառնում. շարունակ փայփայող ձեռք ունենալով իրենց վրայ, նրանք բոլորովին մեղկանում են և հասակն առնելուց յետոյ լինում են երկչոտ, ուժ բնաւորութիւնից ու հաստատուն կամքից զուրկ: Խիզախ, ձեռներէց ոգին պակասում է այդ սերնդի մէջ: Այդպիսի ազգը սկսում է խուսափել ամեն տեսակ ծանր խնդիրներից, ուստի, բնական օրէնքով, բազմածնունդ ազգերն իրենց փոքր հայրենիքից դուրս գալով ներս են հոսում կանգուն և հարուստ ազգերի մէջ: Դրսից եկած օտար հոսանքը սկզբում եթէ չաճող ազգին անշարժութիւնից չի թօթափում, գէթ նրա գլխովին ընդարմանալու առաջն է առնում, իսկ յետոյ կամաց կամաց սկսում է կլանել, եթէ իւր դիրքը զօրաւոր է դառնում:

Ֆրանսիան այսօր 1,300,000-ից աւելի օտարական ունի իւր հողի վրայ: Տանը հետևանքներից խուսափելու համար, նա նպատակայարմար է համարել օգտուել օտարների բերած նոր կենսականութիւնից: Ծննդականութեան նուազման առաջն առնելու համար, Ֆրանսիան բարւոք է դատած եկւորներին ֆրանսիական քաղաքացի դարձնել:

Որովհետև կանգնած դրութիւնը ներկայումս աղէտաբեր կարող է լինել մի ազգի համար, ուստի ապագայի այդ երկիւղը հասարակական կարծիքը յուզման մէջ է դրել:

Որո՞նք են այն պատճառները, որ Ֆրանսիային այդ դրութեան հասցրին:

անների թարգմանններն ուղարկուած են գրաստնաւը, որպէսզի փութացնեն այդ հայերի արտաքսումը Թիւրքիայի սահմաններից:

Վնասուած են մի քանի օտարահպատակների խանութներ, որի պատճառով մնացած խանութները սկսեցին փակել:

Կ. ՊՈԼԻՍ, 17 օգոստոսի.—Օգոստոսի 15-ին կայացած դեսպանների խորհրդի մէջ որոշուած էր Դրանը բերանացի մի առաջադրութիւն անել ամենալուրջ կերպով մատնանիշ լինելով անցքերի վտանգաւոր բնաւորութեան վրայ, և առաջարկել նրան, որ նա իշխանութիւններին անհրաժեշտ խրատներն ու միջոցները տայ անկարգութիւնների առաջն առնելու: Բացի դրանից, վճռուած էր անձամբ առաջադրութիւններ անել Ելդըզ-Քէօշկում: Այդ երկու վճիռներն էլ նոյն օրն և եթ գործադրուած են: Երեկոյեան արտաքին գործերի մինիստրը գնաց աւստրիա-ունգարական դեսպան բարոն Կալիչէի մօտ և հաւատացրեց նրան, թէ ամեն բան կանի խաղաղութիւնը վերականգնելու համար: Բարոն Կալիչէն պահանջեց, որ աւստրիական պոստատունը պահպանուի. մինիստրը պատասխանեց, որ պոստատան պահպանութեան համար բոլոր միջոցները ձեռք են առնուած:

Արտաքին գործերի մինիստրը դիւանագիտական մարմնի աւագագոյն անդամին հաղորդեց, թէ սուլթանը հրաման է տուել, որ զօրքերը զէնքը գործ դնեն նաև մահմեդականների դէմ, եթէ նրանք որևէ բռնի գործողութեան դիմեն: Այս պատճառով ոստիկանութիւնը և զօրքերը այժմ աւելի եռանդով են գործում, քան մինչև այժմ:

Դեսպաններն երէկ լուրջ առաջադրութիւններ արին Դրանը, ի նկատի կացուցանելով, որ եթէ անկարգութիւնները շարունակուեն, կարող են վատ հետևանքներ ունենալ:

ԼՈՆԴՈՆ.—Foreign Office-ը Կ. Պոլսից մի պաշտօնական հեռագիր է ստացել, որով հաղորդւում է, թէ անհրաժեշտ է ճանաչուած բրիտանական մարտանաւերից նաւաստիների ափ իջեցումը՝ դեսպանատունը, հիւպատոսարանը և պոստատունը պահպանելու համար:

ՊԱՐՍԻՑ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԸ

(Նամակ Քիւրդիստանից)

Եթէ ուշի-ուշով դիտենք Պարսկաստանի ներկայ կառավարչական եղանակը, կը տեսնենք, որ քիչ փոփոխութեամբ նոյնն է, ոպէս եղել է դարերից ի վեր: Դարերի ընթացքում յաճախ պատահող քաղաքական բարդ հանգամանքները չեն կարողացել վարչական եղանակը մազի չափ անգամ փոխել Պարսկաստանում: Պարսից կառավարութեան անիւը պըտտուել է և պտտւում է քմահաճորար... Երկար խաղաղ կամ անխաղաղ ժամանակներում անգամ չեն մտածել երկրի բարեփոխութեան համար: Ինչո՞ւ. Որովհետև մեծից սկսած մինչև փոքրը, փոքրից սկսած մինչև մեծը՝ պաշտօնեաները չեն զգացել և չեն զգում իրենց լծի ծանրութիւնն և իրենց պարտականութիւնը. կարծես, միայն իրենց բարձր գիրքին են հասել վայրենի կրքերի ծարաւը յագեցնելու համար: Նրանց մըտքով բոլորովին չի անցնում, թէ միլիոնաւոր ժողովուրդ իրենց են նայում և թէ իրենք պարտաւոր են այդ ժողովրդի բարօրութեան համար մտածել: Բոլորն առանց բացառութեան՝ խան, պաշտօնեայ, դատաւոր թէ սպարապետ ծառայում են միայն պալղուն գանների համար, ծառայում են իրենց գրպանին. չնայելով որ եղել են շահեր, որոնք երկրի բարօրութեան մասին մտածել են: Մի երկրում, ուր քառասուն-վաթսուն կին ունենան և դեռ այդ բաւական չհամարեն, տարեկան էլ հինգ-վեց հարս բերեն, հասկանալի է, թէ ամբողջ ուշքն ու միտքը ո՛րտեղ կենդրոնացած կլինի: Մի երկրում որ կանանց մերկացրած տեղնել տան լճակ, և նրանց մարմնին նայելով զուարճանան, այդ տեսակ կեանքով ապրող պաշտօնեաները ինչպէս կարող են մտածել իրենց նայող խեղճ ժողովրդի բարօրութեան վրայ...

Հենց գլխաւոր պատճառն այդ է, որ Պարսկաստանի քաղաքական հորիզոնում դուրս չէ եկել մի այնպիսի քաղաքագէտ, ժողովրդի բարօրութեան համար մտածող մի մարդ, որ զգար երկրի անկման գրութիւնը, յօրինէր ժամանակի պահանջների համեմատ երկիրն ու ժողովուրդը ապահովեցնող օրէնքներ: Օրէնքներ, որ պարբերաբար մշակուելով կըպահէին ժողովրդին փոքր ի շատէ խաղաղ և մարդավայել կացութեան մէջ:

Ցողուածիս գլխաւոր նիւթը պարսից դատաւորներն են, որոնց վրայ և մանաւանդ եմ խօսք. դրանով ընթերցողը մի գաղափար կարող է կազմել Պարսկաստանի վարչութեան վրայ:

Իւրաքանչիւր նահանգի վրայ նշանակւում է մի դատաւոր: Վերջիններս չեն նշանակւում նայած իրենց վարչական հմտութեան և տաղանդին, այլ ով շատ փող է տալիս, այդ պաշտօնն էլ նրան է տրւում: Մէկին առաջարկում է երեսուն հազար թուման (մի թումանը հաւասար է ռուսական մօտ 2 րուբլուն), միւսը վաթսուն հազար թուման, ճիշտ այնպէս, որպէս աճուրդով ծախուող ապրանքի համար են սակարկում: Այդպէս այս պատասխանատու պաշտօնը տրւում է նրան, ով որ պալղուն գանները շատ է տալիս, լինի նա նշանաւոր, թէ ամենահասարակ մարդ, թէկուզ բոլորովին անարժան էլ լինի այդ պաշտօնին: Բայց ինչո՞ւ այդքան մեծ գումարներ են տալիս դատաւորութեան համար:—Կրկնապատիկը շահելու համար: Դատաւորը լիազօր տէր է դառնում իրեն յանձնուած երկրին, նոյն տեղի ժողովրդին: Նա իրաւունք է ունենում պատժել ամեն տեսակ պատիժներով—ֆալախկայ ձգել ու ծեծել, կախել, գլխատել, թնդանօթահարել և այլն և այլն: Դատաւորն այդ լիազօր իրաւունքներն ստանալուց յետոյ մարդկանց ամեն տեսակ տուգանքների է ենթարկում. մի խօսքով սկսում է նիւթապէս հնձել: Նա բոլորովին չի մտածում ժողովրդի բարօրութեան վրայ: Նրա մտածութիւնն իւր գրպանից դէնը չի անցնում: Նա բոլորովին չի ըղձում իւր լծի ծանրութիւնը մարդկանց և Աստուծոյ առաջ: Նա միայն մտածում է իւր տուած վաթսուն հազար թումանը ստանալու ու մի երկու այնքան էլ աւել շահելու վրայ: Այդպիսով մի մարդ անխիղճ կերպով ծծում է մի ամբողջ ժողովուրդ: Ո՞վ է մեղաւորը: Հին կարգերը, որով մի ամբողջ ժողովուրդ յանձնւում է մէկի քմահաճ իրաւունքին:

Հազարաւոր պատահող օրինակներից բերենք մի երկուսը:

Մի անգամ Զանգանից դէպի Համադան գնալիս, ճանապարհի վրայ իջել էի տասը տնից բաղկացած Մոլիք գիւղում: Տունը, ուր հիւրընկալուած էի, զուրկ էր ներքին սարք ու կահկարասիքից: Տանտէրը միջահասակ մարդ էր. նա հիւանդ պառկած էր անկողնում: Նրա ընտանիքը բաղկացած էր մի ոչ այնքան ծերունի կնոջից, երեք՝ մէկը միւսից մի տարով մեծ փոքրահասակ տղայ երեխաներից և մի շատ սիրուն աղջկանից, որը խնամում էր իւր հօրը: Երբ մտայ ներս, հիւանդը գլուխը բարձրացնելով բարձի վրայից բարևեց և խոր հառաչելով իւր ծանրացած գլուխը կրկին ցած թողեց բարձի վրայ: Նրա գունատ դէմքը, ճերմակած մազերը ցոյց էին տալիս, որ խեղճը կեանքի մէջ շատ դառնութիւններ ու դժբաղդութիւններ է կրել:

Հետս ունէի ճանապարհորդական փոքրիկ հիշտանա: Ծառան սկսեց թէյ պատրաստել: Մեր հիւրընկալը տեսնելով այդ, խնդրեց, որ մի փոքր շաքար և թէյ տանք: Եւ խոր սրտից ախ քաշեց:

Թէյ ու շաքար տալուց յետոյ հետաքրքրութեամբ հարցրի. «բարեկամ, ինչո՞ւ այդպէս խոր ախ քաշեցիր»:

—Էհ, արբաբ (տէր), ինչպէս ախ չքաշեմ. կար ժամանակ, որ հարիւրաւոր ֆրանկներ (օտարականին ֆրանկ են ասում, լինի նա հայ կամ ռուս և այլն) հիւրեր իմ տանս մէջ հիւրասիրւում էին պատշաճ պատւով. ունէի աչքի ընկնող հարստութիւն՝ մի քանի սեպհական գիւղ, ոչխար, տաւար, ձի, գոմէշ, և այլն և այլն: Այժմ զրկուած եմ բոլորից, թալանուած ամենից, ապրւում եմ իմ պատուելի հիւրից թէյ ու շաքար խնդրելու...

—Ո՞վ թալանեց քեզ, ո՞վ զրկեց քեզ այդ բոլորից, հարցրի ես:

—Հաքիմը (դատաւոր), պատասխանեց նա: Ցայանի աւազակապետ Աբբաս խանն մի մարդ էր սպանած իմ գիւղերի մօտ: Դատաւորը չարամտութեամբ այդ մեղքը բարձեց ինձ վրայ և բանտը ձգեց: Նա չէր կարող Աբբաս խանին պատժել, որովհետև նրանից «ռուշում» էր: Երկու հազար թուման կաշառք տալով ազատուեցայ: Կրկին ու կրկին այլ և այլ նոյնանման անիրաւացի պատճառներով խլեց ինձանից ամեն բան և ես դժբաղդ կեանքիս վերջին սև օրերն եկայ այստեղ անցնելու:

Այլ տեսակ յսուրաք:

Մի յայտնի աւազակապետ Ռաշիդ-բէկ անունով՝ Քիւրդիստանի կողմերը համարեա տակն ու վրայ էր անում—թալանում, կողոպտում և սպանում: Քիւրդիստանի դատաւորին յաջողւում է նրան բռնել ու բանտարկել: Ժողովրդին յայտնում են, որ Ռաշիդ-բէկը բռնուել է և վաղը պիտի գլխատուի, ուստի թող գան հանդիսատես լինելու: Աւազակի եղբայրը երեկոյեան մտնում է դատաւորի մօտ և երեք հարիւր թուման կաշառք տալով ազատում է Ռաշիդ-բէկին: Այդպէս, ամբողջ մի նահանգ ահ ու դողի մէջ պահող աւազակը ազատուեց երեք հարիւր թուման կաշառքով:

Ժողովուրդը գնում է ներկայ լինելու գլխատմանը: Դատաւորը խաբում է ասելով, «յետաձգուած է»: Բայց մի քանի օրից յետոյ լսւում է, որ Ռաշիդ-բէկը այստեղ-այնտեղ թալան, կողոպուտ, մարդասպանութիւն է անում առաջուանից էլ սարսափելի: Դատաւորի ինչ մտածելու բանն է, թէ աւազակին կրկին պատելով էլ առնել կրակէ իւր

Առանց մանրամասնութեան մէջ մտնելու շատ է միայն գլխաւորները յիշել: Հեղինակաւոր հրապարակախօսներից ոմանք պնդում են, որ իրերի այդ դրութեան վրայ ո՛չ նուազ ազդեցութիւն է ունեցած Մալթուսը և նրա վարդապետութիւնը: Բայց նախ ո՞վ էր Մալթուսը և ինչ նրա վարդապետութիւնը,—որ յետոյ հեղինակի անունով կոչուեցաւ [illegible]:

Անգլիացի, բողոքական քահանայ Մալթուսը երկար հետախուզութիւններ անելուց յետոյ այն եզրակացութեան հասաւ, որ ամեն երկրի ազգաբնակութիւն հետզհետէ սկսում է բազմանալ աւելի ու աւելի: Նա կարծեց տեսնել, որ բազմաթիւ ընտանիքներ զաւակներ են յառուցանում առանց կանխապէս հոգ տանելու թէ արդեօք իրենք միջոց պիտի ունենան, կարո՞ղ պիտի լինեն այդ երեխաներին մեծացնելու:

Աչքի առաջ ունենալով, որ մի որևէ երկրի բազմածննդութեան խնդիրը տնտեսական մեծ կարևորութիւն ունի իւր հետևանքներով, Մալթուսը որ մասնաւոր իրողութիւններն ընդհանրացնելու մեծ ձիրք ունէր, բոլորովին մի նոր թէօրիա հրապարակեց, թէօրիա՝ որ երկար ժամանակ ամբողջ աշխարհը զայթակղեցրեց:

Մալթուսը թշուառութեան սկզբնապատճառը քննութեան առնելով այն եզրակացութեան յանգաւ, որ նա գըտնւում է նոյն իսկ մարդու մէջ:

«Բոլոր կենդանի էակների յարատև միտումն է՝ իրենց տեսակը աւելի ու աւելի բազմացնել, քան որ թոյլ է տալիս իրենց տրամադրութեան ներքոյ գտնուող սնունդի քանակութիւնը»:

Մանաւանդ մարդու վրայ այդ բնական տրամադրութիւնը և ցանկանալով այդ միտումի հետևանքները բոլորովին որոշ և բացայայտ լիզուով ամփոփել, Մալթուսը չերկնչեց հաստատելու, որ մինչդեռ ամեն երկրի ժողովրդի միտումն է իւրաքանչիւր 25 տարին կըրկնապատկուել և երկրաչափական համեմատութեամբ շրջան առ շրջան բազմանալ, միւս կողմից, ճարտարագործութեան և երկրագործութեան ամենայաջող պայմաններումն իսկ, մարդու գոյութեան միջոցներն աճում են միայն մաթեմաթիքական յառաջատւութեամբ:

«Երկրաչափական» և «մաթեմաթիքական» յառաջատւութիւն բառերը նա բանաձևեց հետևեալ կերպով.

Ժողովուրդը աճում է՝

1, 2, 4, 8, 16, 32, 64, 128, 256.

Գոյութեան միջոցները աճում են՝

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9

Այս բանաձևը ցոյց է տալիս ժողովրդի և նրա գոյութեան միջոցների [illegible] աճումն 25 տարուայ շրջանում, յընթացս երկու դարու: Այդպէս մինչդեռ ժողովուրդը երկու դարու ընթացքում 1 միլիոնից մինչև 256-ի պիտի հասնէր, ընդհակառակը գոյութեան միջոցները պիտի շատանային 1-ից մինչև 9-ի համեմատութեամբ:

Իսկ եթէ իրականութեան մէջ այդ օրէնքը չի կատարւում, այսինքն՝ եթէ ժողովրդի աճման այդ միտումը արագապէս զգալի կերպով չի անցնում գոյութեան միջոցների մատակարարած սահմաններից, Մալթուսը դրա պատճառը գտնում էր զանազան խոչընդոտների մէջ: Այդ խոչընդոտներն են՝ թշուառութիւն, զրկանք, վաղահաս մահ, տարափոխիկ հիւանդութիւն, սով, պատերազմ և այլ ամեն ազգի պատուհաս, որոնցից ոմանք անընդհատ կերպով իսկ ազդելով, բոլորը միացած, զանազան տանջանքների շնորհիւ, չըթողյում են ժողովրդին մնալ այն սահմանի մէջ, ուր գրել է նրան բնութիւնը:

Փոխանակ վերև յիշուած [illegible], որոնք իրենց հետ բերում են ամեն կարգի աղէտ, Մալթուսը առաջարկեց ձեռք առնել [illegible]: Իսկ այս վերջին առաջարկութիւնը կայանում էր նրանում, որ մարդը իւր ամուսնութիւնը յետաձգէր, ժուժկալ կեանք վարէր և ամուսնանալուց յետոյ մի առաքինի ձևով [illegible], այնպէս որ իւրաքանչիւր ընտանիքի զաւակների թիւր գոյութեան միջոցներից աւելի չպիտի լինէր: Քանի հոգու համար որ նախապատրաստուած սեղան կար, այնքան էլ աշխարհ պիտի գային, աւելորդը կեանք ստանալու իրաւունք չունէր:

Մալթուսը կարծում էր, որ այդ ձևով միայն ժողովրդի աճումը իւր գոյութեան միջոցների շրջանակի մէջ կըմնար, ուստի և մարդկային ցեղը զերծ կըլինէր այն սոսկալի թշուառութիւններից և աղէտներից, որոնց որ նա շարունակ ենթարկուած է եղել:

Այդ վարդապետութեան ուղիղ և սխալ կողմերը մէկդի թողնելով, առաջին հայեացքից պարզ երևում է, որ նա բընաւ չի պատշաճում աշխարհիս ներկայ դրութեան, թէ տարածութեան և թէ գիտութեան մատակարարած միջոցների տեսակէտից:

Սակայն մալթուսականութիւնը երկար ժամանակ նկատւում էր իբրև մի անհերքելի վարդապետութիւն և նա իւր ահագին ազդեցութիւնն ունեցաւ ֆրանսիական և, նամանաւանդ, անգլիական ընկերութեան վրայ: Այդ վարդապետութեան ունեցած ազդեցութիւնը անուրանալի է թէ անցեալում և թէ ներկայում: Ներկայ ընկերութեան անդամների ամուսնացման յապաղումը և զաւակների թուի սահմանափակումը բստ կամս, մալթուսականութեան հետևանք է: Այդ մեծ գաղափարը դեռ գործում է:

Փակագծի մէջ պիտի ասեմ, որ մալթուսականութեան իրագործումը տեսած եմ և Հայաստանում: Գիւղի մէջ այդ վարդապետութիւնը իւր կատարեալ կիրառութեան մէջն է գտնւում: Քօղարկուած զաւակասպանութեան այդ սխալը տարածուած է Հայաստանի մանաւանդ այն տեղերում, ուր միսիօնարներ կան:

Բայց ֆրանսիական ծնունդի նուազումը, նրա չաճող դրութիւնը լոկ մալթուսականութեան վերագրելը հերիք չէ, թէև երկար տարիներ [illegible] պաշտպանող անտեսագէտները այդ միևնոյն վարդապետութիւնը կըրկնել են, թէև բոլորովին սխալ եղանակով:

«Մարդս միանգամից թէ արտադրող է և թէ ծնող: Մինչդեռ արտադրելու համար հարկաւոր է ջանք, յօգնածութիւն, ընդհակառակը ծնելու համար պէտք է զուարճութիւն, ուստի նա միտում է իւր ծնունդը աւելացնել, քան արդիւնքը...: Արդ, որովհետև անհրաժեշտ է այդ երկուսի մէջը հաւասարակշռութիւն հաստատել, ուստի պէտք է կամ [illegible]:

Այս սխալ վարդապետութեամբ մեծացած է մի ամբողջ սերունդ:

Հազիւ քառորդ դար կայ, որ այդ վարդապետութիւնը իւր հիմունքը սկսեց կորցնել, շնորհիւ երկրագործութեան, վաճառականութեան և ճարտարագործութեան հսկայական յառաջդիմութեան:

Թէ Մալթուսի և թէ Մոնշրետի դպրոցի կարծիքները ներկայումս որևէ հիմունք ունենալ չեն կարող: Մարդկութիւնը դեռ երկու երեք դար ապահովուած է, նոյն իսկ եթէ գիտութիւնը եւս կանգ առած լինէր, մի բան՝ որ անկարելի է: Դեռ ահագին տարածութեամբ ընդարձակածաւալ հողեր կան: Եթէ մի ընդհանուր ակնարկ ձգենք, կըտեսնենք որ ներկայումս գոյութեան միջոցներն եւս աւելի արագ են աճում, քան մարդկային ցեղը, որին ապացոյց կարող է լինել ուտելիքների գնի ցածրացումը: Բոլոր հանգամանքներն ի մի վեր առած, վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ ցորենը, գարին, հաճարը, մինչև անգամ միսը, պանիրը և այլն, տարէցտարի աւելի աժանանում են քան թանգանում: Բարեկեցութիւնը հետզհետէ աւելի ու աւելի ընդարձակ ծաւալ է ստանում:

(Վերջը միւս անգամ)

Ս. Սպահ Դիլեան:

Փարիզ, 20 օգոստոսի (Ն. տ.)

ապականութիւնները։ Նրանք պապղուն գաւաններն են….

Ընթերցող, այս դէպքն ինձ մօտ պատահեց։ Տեղական վաճառականները և հասկացող դասը դատաւորից գանգատ յարուցին բարձր իշխանութեան։ Վերջինիս բարձր իշխանութիւնը տանել տալով իւր մօտ ատոյտ քանի հազար թուման կաշառք և առանձին անոտփր պատուով դարձրից իւր տեղը։ Ժողովրդի արդար բողոքը մնաց ձայն բարբառոյ յանապատի։ Դատաւորը, դառնալով իւր տեղը, խեղճին ստորագրողներին մի-մի կանչեց, փալախով ծեծել տուեց և իւրաքանչիւրից հինգ հարիւրից—հազար թուման տուգանք առաւ։

Ահա պարսից իշխանութեան պատկերը։

Կայծ-Սինիք։

Քիւրդիստան, 21 յուլիսի։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պոլսի մեր Թղթակցի գրած նամակներից ի միջի այլոց իմանում ենք, որ «Моск. Вѣд.»-ի խմբագիր պ. Պետրովսկին Պոլիս է գնացել Երկիրը և դրութիւնը ուսումնասիրելու համար և խօսակցութիւն է ունեցել Mars-ի հետ։

—

Ֆինլեանդական լրագրերը հաղորդում են, որ այնտեղ հաստատուելու է ուսուց ժողովրդական դպրոցների տեսչութեան նոր պաշտօն։ Այդ նոր տեսչի վրայ պարտականութիւն է դրւում հետևելու ուսումնարաններում կանոնաւոր դասաւանդման և տնտեսական մասին։

—

Թէյի մշակութիւնը հետզհետէ լայն ծաւալ է ստանում Կովկասում։ Թէյի տունկերի աճման ապացոյց են համառուսական ցուցահանդէսին հանդէս բերած Կովկասեան թէյի նմուշները։

—

Զինուորագրութեան ժամանակ արտօնութիւնները փոփոխութեան են ենթարկւում. վճռուած է ոչնչացնել գիւղական և քաղաքային ուսումնարանների ուսուցիչների այն իրաւունքը, որով նրանք զինուորագրութիւնից ազատւում են։ Նրանք զինուորական խմբական ծառայութեան կը կոչուէին միայն մի տարի ժամանակով, որից յետոյ կը հաշուէին պահեստի մէջ 17 տարի ժամանակով։

—

Բարձրագոյն հրամանով Անդրկովկաս են ուղարկուած կեդրոնական վիճակագրական մասնաժողովի ատագ խմբագիր Սիրենիւ և գնդապետ Սմօրոդսկին։ Վերջինս ամսոյս 21-ին արդէն եկել է Թիֆլիս, իսկ Սիրենիւին այս օրերս սպասում են Թիֆլիսում։

—

Երկրագործութեան դեպարտամենտը յայտնել է Թիֆլիսի պ. նահանգապետին, որ պարտիզպանութեան և պտղաբուծութեան ռուսական կայսերական ընկերութեան կովկասեան ճիւղին թոյլատրուած է առաջիկայ սեպտեմբեր ամսին պարտիզպանութեան արդիւնաբերութիւնների ցուցահանդէս սարքել։ Մրցանակաբաշխութեան համար որոշուած է մի մեծ և երկու փոքր արծաթէ մեդալներ, 5 բրոնզէ մեդալ և 10 գովասանական թերթեր։

—

Պարապմունքները Մոսկուայի համալսարանում կըսկսուեն սեպտեմբերի սկզբներին։

—

Հարաւային Ռուսիայի հանք-արդիւնաբերողների XXI-րդ նստի պարապմունքների ծրագրի մէջ, որ լինելու է Ներկայ տարուայ հոկտեմբերի վերջին, մտցուած է նաև Ռուսիայի հարաւային կողմերում հանքային ինստիտուտի և հանքա-տեխնիքական դպրոցի բանալու հարցը։

—

1904 թ. լրանում է Ռուսիայի Խարկով քաղաքի 250-ամեակը։ Քաղաքի պատմութիւնը գրելը յանձն է առել պրոֆեսոր Բագալէյ. ամեն տարի այդ գործի համար ծախս պիտի արուի 1,200 ր.։

—

Բագւում, տեղական թերթի ասելով, մօտ ժամանակներում մտադրութիւն կայ բանալու մեքենավարների և շոգենաւային մեքենագէտների դպրոց։ Ի նկատի ունենալով, որ Ներկայումս Կասպից ծովի շոգենաւերի վրայ ծառայողները, մեծ մասամբ, ինքնուս մեքենավար ու մեքենագէտներ են, որոնք հմուտ չեն իրենց գործին և յաճախ վնասներ են հասցնում նաւատէրերին, Բագւում բացուելիք այդ նոր դպրոցի միտքը պէտք է ուրախութեամբ ողջունել։

—

Դերպէնդի նաւագործարանի գերմանական ներկայացուցիչը, «Կասպի»-ի ասելով, եկել է Բագու և մի միլիոն ռուբլու աւելի պատուէր է ստացել Կասպից ծովի համար նաւեր շինելու համար։

—

Նիժնի-Նովգորոդում գումարուած առևտրա-արդիւնաբերական ժողովը, «Նովկ. Սէլյ. Խոզ.»-ի ասելով 140 ձայնով ընդդէմ 63-ի, ցանկալի է համարել երկրագործութեան շահերն ի նկատի ունենալով, արտասահմանից ստացուած գիւղատնտեսական մեքենաներից վերցուած մաքսի իջեցումը։

—

«Պրիազ. Կրայ» թերթի ասելով, այս օրերս Ռոստով է եկել կովկասեան հարուստ կալուածատէր և Անդրկասպեան երկրում աղահանքերի տէր իշխան Գ. Գ. Լօբանով-Ռոստովսկին և Ներկայումս զբաղուած է Կովկասի զանազան պեղուող հարստութիւնների հարցի մշակումով։ Իշխանի այդ ձեռնարկութեանը մասնակցելու ցանկութիւն են յայտնել նաև Ռոստովի դրամատէրերը։

—

«Կովկաս»-ը հաւաստի աղբիւրից ստացած տեղեկութեան համաձայն հերքում է տեղական թերթերում հաղորդուած այն լուրը, թէ վրաց ազնուականների բանկի վարչութեան նախագահ իշխան Ճաւճաւաձէն սեպտեմբերի սկզբին ուղևորուելու է Պետերբուրգ։

—

Հինգշաբթի, օգոստ. 22-ին Թիֆլիսի Դըվօրցովոյ փողոցի վրայ գտնուող «Սաքարտվելօ» հիւրանոցում Սմբատ անունով մի երիտասարդ վերջ տուեց իւր կեանքին՝ ատրճանակը ուղղակի իւր բերանումը արձակելով։

Այդ երիտասարդը ծառայելիս է եղել, ասում են, Փիթոյեանների առևտրական տանը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՆԱՆՑ (Գանձակի գաւառ), 13 օգոստոսի.—Գիւղացիների վիճակը բաղդատած անցեալ տարիների հետ ներկայումս շատ աննախանձելի է։ Ժողովրդի թիւը տարէցտարի բազմանում է, իսկ ժողովրդին սնունդ—հաց մատակարարող հողը մնում է միևնոյնը, այսինքն այնքան՝ ինչքան սրանից 50 տարի առաջ է եղել։ Կարելի է ասել, որ միևնոյն քանակութեամբ հողից սնւում են կերակրւում առաջուանից մի քանի անգամ բազմապատկուած բնակիչները։ Սրա վրայ աւելացնենք և այն, որ այն ժամանակներում Բանանցում երկրագործութեամբ պարապողները միայն մի քանի տներ էին, իսկ ներկայումս ուրիշ ապրուստի աղբիւր չունենալով՝ ամեն ոք ուզում է իւր տարուայ պարէնը հողից ստանալ։ Սակայն հողը քիչ է, բաւականութիւն չի տալիս, իւրաքանչիւր տանը հազիւ տարեկան 2—3 օրավար է ընկնում։

Յիսուն-վաթսուն տարի չի անցել այն օրից, երբ բանանցեցիները փորում էին գետնին ահագին խորութեամբ, և այնտեղից կոլոր երկաթաքարեր հանելով տալիս դարբնին. վերջինս մանրացնում էր քարը ահագին մուրճով, ածում քուրայի մէջ, հալում, նրանից երկաթ պատրաստում և տալիս գիւղացիներին հարկաւոր եղած գործիքներ պատրաստելու։ Ներկայումս այդ ահագին փոսերը մնում են, որոնք նայողին սարսուռ են ազդում իրենց խորութեամբ։ Այժմս երկաթ պատրաստելու սովորութիւնը վաղուց վերացել է։

Կար մի ուրիշ պարապմունք էլ բանանցեցու համար—այդ ածխագործութիւնն էր, սակայն այդ էլ, անտառների վերջանալու պատճառով, վերացել է։ Իսկ անասնապահութեամբ էլ չի կարելի կառավարուել, քանի որ հազիւ ամեն մէկը կարողանում է մի կով կամ միքանի այծ պահել։ Այո, իւրաքանչիւր տուն կարող է աւելի անասուններ պահել և գիւղատնտեսութեամբ պարապել, բայց, դժբաղդաբար, շատ անասուններ պահելու համար շատ էլ արօտատեղի և խոտ ու դարման է հարկաւոր, որոնցից զուրկ են Բանանցի հողերը, որոնք միայն այնքան են լրացնում, ինչքան հարկաւոր է գիւղացու մ. կովի, մ. ջորու և մ. ձիու համար։

Գոնէ թոյլ տրուէր, որ այդքանին էլ բանանցեցին [illegible] տիրապետէր - այդ էլ չի լինում. իւրաքանչիւր տարի, ամառուայ եկող վրանաբնակ պարսիկները մի կողմից, հարևան հայ գիւղացիները միւս կողմից, իրենց տաւարը արածացնում, կուտ են տալիս մեր արտերն ու փչացնում։ Այս [illegible] ունին ի հարկէ, բայց քանի՞ դորոզչու կեանք է խլել տաւարատէրի արագաձիգ հրացանի զրնգոցը։ Հողի սակաւութեան պատճառն էր, որ մի քանի հոգի միանալով, միքանի տարի առաջ ուզում էին գաղթել Թառթառ գետի ափին մի հարթ տեղում գիւղ ձգելու, որը դժբաղդաբար ինչ-ինչ պատճառներից գլուխ չեկաւ։ Որ բանանցեցին իւր հողից հազիւ տարուայ երեք ամսուայ պարէնն է ստանում- այդ պարզ է, իսկ մնացած 9 ամսուանը նա հոգում է ուրիշի, Գանձակի պարսիկների արտերը հնձելով։ Ուրեմն պարզ է, թէ ինչ աննախանձելի դրութեան մէջ պիտի լինի մի գիւղացի, որ տարեկան մի քանի հարիւր պուդ ցորեն ինքը Գանձակի հրապարակը կամ այլուր արտահանելու փոխարէն՝ ստիպուած է լինում նոյն հրապարակից միքանի հարիւր պուդ ցորեն գնելու։

Գոնէ առևտրի կամ խոտի խուրձի տեղափոխութեան միջոցները դիւրին լինէին. այդ յարմարութիւններից զուրկ է Բանանցը. ճանապարհները դժուարագնաց—դարիվայր, դարիվեր, ծուռ ու մուռ նեղ կեռմաններ. երկու ջորի կամ էշ եթէ հակառակ կողմից գալու լինեն, դժուարութեամբ են անցնում։ Ամեն մի ջորու բեռնում են տասը խուրձ՝ 4-ը մի կողմը, 4-ը միւս, երկուսն էլ մէջ տեղը, այն էլ այնքան խնամքով են բեռնում, որ մի 10 տարեկան երեխայ մի քանի ջորիներ կարող է հասցնել տուն առանց վտանգի։

Բանանցեցին այգի էլ ունի, նրա գինին յայտնի է [illegible] մականունով, որովհետև գլխաւորապէս թթու է լինում և գոյնը բաց։

Միայն այս տարի է որ ջրի նեղութիւն չքաշեցինք, միւս տարիներում ջրի կատարեալ սով էր լինում.

Երկաթաքարեան։

ՄԻՍԿԻՆՋԻ (Ախտի գաւառ), 13 օգոստոսի։—Միսկինջի գիւղը գտնւում է Ախտի գիւղաքաղաքի հարաւ արևելեան կողմը մօտ 14 վերստ հեռաւորութեան վրայ, որի բնակիչների թիւը վեցհարիւր տուն է հասնում։ Այս գիւղը միակ գիւղն է ամբողջ Դաղստանում, որի բնակիչներն առանց բացառութեան բոլորն էլ շիա դաւանութեան են պատկանում։ Գիւղիս միակ բերքը հացահատիկն է, որ մեծ քանակութեամբ ցանում ու արտահանում են Ղուբա և այլ տեղեր վաճառելու։ Բացի հացահատիկից, այս գիւղի շրջակայքում առատօրէն բուսնում է [illegible] կոչուած բոյսից, որ տեղական լեզուով կոչւում է [illegible] Ղուբայի և Դերբենդի վաճառականներից մի քանիսը ամառային ամիսներում գալիս են այս գիւղից, ինչպէս և Ախտի շրջակայքից այդ լուծադեղից մեծ քանակութեամբ հաւաքում գիւղացիներից և ուղարկում Մարսէյլ։ Լուծադեղի պուդը տեղս արժէ 1 ր. – 20 կոպ.-ից մինչև 1 ր. 60 կոպ. իսկ մինչև Մարսէյլ հասցնելու համար, ինչպէս տեղեկացանք, մեր վաճառականներին նստում է պուդը 8—9 րուբլի [1])։ Միսկինջի գիւղն ամբողջ Դաղստանում հռչակուած է և նրանով, որ այստեղի լէզգի կանանց պէս գեղեցկուհիներ ոչ մի տեղ չկան։

Անցեալ տարում Ախտի հանքային ջրերից «Լէզգիների մէջ» խորագրով գրած մի յօդուածի մէջ յիշատակել էի երկու ծպտեալ հայերի մասին և ասել էի, որ դրանք, այդ հայերը (Գրիգորն ու Աշոտը) մի որոշ ժամանակ եղել են այս Միսկինջի գիւղում. գրել էի նոյնպէս թէ կանխատեսում այցելել այս գիւղը հարկաւոր տեղեկութիւններ հաւաքելու, քանզի անցեալ յօդուածիս մէջ գրել էի թէ այդ մարդիկը ինձ կասկածելի անձեր են թւում։ Այժմս այդ գիւղումն եմ։ Երկար ու բարակ հարցուփորձից յայտնւում է, որ ռուս-թրքական պատերազմից քիչ առաջ այստեղ են գալիս երկու [illegible], որոնք գիւղացիներին ասել են թէ «Ալին և Մուհամմէդը մեզ երևացել են երազում և հրամայել որ գանք այս կողմերում քարոզենք»։ Այսպէս դրանք կրօնամոլ և փանատիկոս Ղուրանի գաւակների համար այստեղ թէ՛ մարգարէութիւններ, թէ՛ գրբացութիւններ են արել և թէ՛ քարոզել են, ընդամէնը մի շաբաթ մնալով, որից յետոյ շրջել են մօտակայ ուրիշ գիւղեր, որպիսիք են՝ Ջաբալի, Ղուռուշլի, Քըրըզը, և այլ տեղեր, որտեղից բաւական փող են հաւաքել միամիտ գիւղացիներից։ Այդ երկու [illegible] իրենց հետ ման ածելիս են եղել մի արկղ, որի մէջ պահւում են եղել զանազան ս. գրքեր, ինչպէս [illegible] են բացատրել։ Յիշեալ այն օրից երբ լէզգիները խռովութիւն յարուցին, որ տևեց 40 օր (1887-ին), գիւղացիների ասելով, այդ ժամանակից երկու դավ-իրշները անյայտացել են և մինչ օրս չկան ու չկան։ Իմ երկար և մանրամասն հարցուփորձից յետոյ յայտնուեց, որ այն խորհրդաւոր սնդուկը նոյն մեծութիւնը, նոյն ձևն ու գոյնն է ունեցել, որպիսին եղել է Ախտիում իջևանած յիշածս երկու հայերի մօտ եղած արկղը։ Այժմս համոզուած ենք, որ մեր յայտնած կասկածը արդարանալու շատ մօտ է։ Այդ երկու ծպտեալ մարդկանց Ախտիից 8—10 օրով անյայտանալը պարզ ապացոյց է, որ դրանք դերվիշի կեղծ դիմակի տակ շրջել են գիւղերում, փող հաւաքել ու դարձեալ Ախտի վերադարձել հայ հագուստով և անուամբ։ Սրանց մասին առայժմ այսքան։ Թերևս այցելենք էլի մի քանի գիւղեր և տեսնենք այդ մարդիկն ուրիշ տեղեր ինչեր են կատարել։

Ղ. Ա. Խաչատրեանց։

---

[1]) Դա խիստ թանկ է և այդ է գլխաւոր պատճառը, որ մեր երկրի բերքերը չեն կարողանում յաջողութեամբ մրցել համաշխարհային հրապարակի վրայ։ Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան բերան «Nord» թերթում տպուած է հետևեալը.

«Միքանի լրագրերի տարածած այն լուրը, թէ Ռուսիան իբր թէ մտադիր է գրաւել Թիւրք-Հայաստանը և թէ Անգլիան առժամանակ տեղաւորւում է Կրետէում, անպայման սխալ է։ Ռուսիան երբէք չի ցանկացել հետևել միքանի պետութիւնների օրինակին, որոնք այդպիսի պատրաստակամութեամբ կըգրաւէին Թիւրքիային պատկանող գաւառները, որպէսզի մի փոքր խաղաղեցնելուց յետոյ տիրեն նրանց։ Իսկ ինչ վերաբերում է Անգլիային, Եւրոպան երբէք չի թոյլ տալ նրան կրկնելու այն, ինչ որ արեց նա Եգիպտոսում»։

—

«Temps»-ի Կ. Պոլսի թղթակցի ասելով, ռուսաց դեսպան Նելիդովի միջամտութիւնը ստիպել է օսմանեան կառավարութեանը դեսպանների բարեհայեցողութեանը թողնելու, որ նրանք համաձայնութեան կայացնեն կրետական հարցի վերաբերմամբ։

Միւս կողմից, ֆինանսական շահերի ներկայացուցիչները հաւատացրել են սուլթանին, որ անհրաժեշտ է Կրետէի խաղաղութիւնը վերականգնել, գոնէ արտաքին խաղաղութիւնը, որպէսզի հնար լինի որևէ միջոցով գտնել անհրաժեշտ դրամական միջոցները։

—

Կ. Պոլսից «Daily News»-ին հեռագրում են.

«Սուլթանը պահանջեց, որ ֆինանսների մինիստրը իրեն ներկայացնելու համար զեկուցում պատրաստէ Թիւրքիայի ֆինանսական դրութեան մասին։ Այդ զեկուցումը կըհրատարակուի այն նպատակով, որ հասարակութիւնը կարողանայ ծանօթանալ թրքական ֆինանսների հետ։ Անհասարակ հետաքրքրութիւնը խիստ գրգռուած է, որովհետև արդէն շատ տարիներ է, որ ոչոք չգիտէ, թէ պետութեան ֆինանսներն ինչ դրութեան մէջ են։

—

Կ. Պոլսից «Indèpedance Belge»-ին օգոստոսի 12-ից (24-ից) հեռագրում են, որ օտարերկրեայ դեսպանները արտաքին գործերի մինիստր Թեֆիկ-փաշային յանձնել են Կրետէի խնդրի լուծման համար ռեֆորմների ծրագիրը։

—

Աթէնքում կրետական փախստականների թիւը հասնում է 10,000-ի։ Այդքան փախստականներին սնունդով Յունաստանի ժողովուրդը, ի հարկէ, չի կարող հանգստանալ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպել խառն լուրերի մէջ հետևեալը, որ և անփոփոխ տպում ենք.

Այս տարի Տփխիսոյ Բեթղեհէմ ս. Աստուածածնայ եկեղեցւոյ տօնախմբութիւնն շատ խաղաղ անցաւ բազմութիւն համեմատելով անցեալ տարուայ հետ, այս տարի ժողովուրդը անչափ էր այնպէս որ քահանայք խաղող օրհնելու ժամանակ բաւական մեծ նեղութիւն քաշեցին։

Ս. Պատարագի ժամանակ Նորընծայ Յովսէփ քահ. Արսլեանը քարոզ խօսելով շատ գեղեցիկ կերպով բացատրեց այդ օրուայ տօնի և մայրական դաստիարակութեան մասին։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 [illegible].—Կայսերական դրան մինիստրի հեռագիր Կիևից. «Օգոստոսի 19-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնան առաւօտեան ժամը 10-ին ժամանեցին Կիև»։

ԿԻԵՒ.—Մինիստր իշխան Լօբանով-Ռոստովսկին վախճանուեց օգոս. 18 ին, երեկոյեան ժամը 8 ին Կայսերական գնացքի վագոնի մէջ։ Հարաւ-արևմտեան երկաթուղիների Շեպետովկի կայարանի մօտ, Կիև գնալիս, Թագաւոր Կայսրը կամեցաւ ոտով մի զբօսանք կատարել։ Գնացքը կանգ առաւ, դեռ յիշեալ կայարանը չհասած։ Ամենքը դուրս եկան վագոնից։ Զբօսանքի մէջ էր և մինիստրը իշխ. Լօբանովը։ Մի քանի քայլ անելով, նա իրեն վատ զգաց և կամեցաւ նորից նստել գնացքի մէջ, որը պէտք է դանդաղ ընթանար առաջ գնացող Նոցին Կայսերական Մեծութիւնների և շքախմբի ետևից։ Մինիստրն արդէն չկարողացաւ առանց ուրիշի օգնութեան մտնել վագոնը և, երբ նրան ներս տարան, ուշաթափուեցաւ։ Իսկոյն և եթ օգնութիւն հասցրին, բայց ամէն ինչ արդէն վերջացած էր. մինիստրը վախճանուեց սրտի պայթումից։ Մարմինը գիշերը տեղափոխուեց Կիև, զմռսուեց և դրուեց երկաթուղու կայարանի դահլիճում։

ԿԻԵՒ.—Ժամը 6-ին Նոցին Մեծութիւնների ներկայութեամբ իշխ. Լօբանովի համար հոգեհանգիստ կատարուեցաւ։ Դագաղը պատած է սև մահուդով։ Նոցին Մեծութիւնները դագաղի վրայ երկու շքեղ պսակ դրին։ Իշխ. Լօբանովի մահուան պատճառով Թագաւոր Կայսրը հրամայեց այսօր լուսավառութիւն չանել, որ պիտի լինէր։

ՓԱՐԻԶ.—Հենց որ ստացուեցաւ իշխ. Լօբանովի մահուան լուրը, հասարակապետութեան նախագահն անյապաղ մի հեռագիր խփեց Թագաւոր Կայսրին իւր անկեղծ վշտակցութիւնը յայտնելով։ Արտաքին գործերի մինիստրը գնաց ռուսաց դեսպանի մօտ, որպէս զի իւր անձնական խորին ցաւակցութիւնը յայտնէ։ Հանոտոն հեռագրով խնդրեց Պետերբուրգի ֆրանսիական դեսպանին իւր ցաւակցութիւնը յայտնել իշխ. Լօբանովի ընտանիքին։

Իշխ. Լօբանովի մահը Պարիզում խոր տպաւորութիւն թողեց։ Առաւօտեան, լրագրերը յատուկ յաւելուածներ հանեցին որոնց ձեռքից ձեռք էր խլում հասարակութիւնը։ Երեկոյեան լրագրերը ցաւակցական-գովաբանական յօդուածներ են տպում հանգուցեալի մասին. ասում են, որ բոլոր կուսակցութիւնները խոնարհւում են նրա առաջ յարգանքով և ցաւակցութեամբ։

ԲԵՐԼԻՆ.—Իշխ. Լօբանովի մահուան առթիւ «Հիւսիսային-Գերմանական Լրագիրն» ասում է, որ նրա յանկարծակի մահուան համար անկեղծօրէն ողբում են, որովհետև Գերմանիային բարեկամ Ռուսիան զրկուեց արտաքին քաղաքականութեան մի փառաւոր ղեկավարից հենց այն րոպէին, երբ եւրոպական դիւանագիտութիւնը պէտք է վճռի լուրջ խնդիրներ։ Ի վերջոյ այդ լրագիրը ցանկութիւն է յայտնում, որ իշխանի յաջորդին նոյնպէս յաջողուի ազնիւ, խաղաղ քաղաքականութեամբ խրախուսել Ռուսիայի արտաքին յարաբերութիւնները, մանաւանդ հարևան կայսրութիւնների հետ ունեցած յարաբերութիւնը։

ՎԻԵՆՆԱ.—«Fremdenblatt»-ն ասում է. Իշխ. Լօբանովի մահուան լուրը ամենքի վրայ ցնցող տպաւորութիւն գործեց և անկեղծ ցաւակցութիւն յարոյց։ Հիմք չկայ ենթադրելու, որ ռուսաց արտաքին գործերի ապագայ մինիստրը շեղուի իշխ. Լօբանովի փորձուած քաղաքականութիւնից։

ՀՌՈՄ.—Լրագրերը իշխ. Լօբանովի մասին խօսում են իբրև պետական խաղաղասէր գործչի մասին, որը դեռևս կարող էր Եւրոպային մեծ ծառայութիւններ մատուցանել։

ՍՕՖԻԱ.—Իշխ. Լօբանովի մահուան լուրը ծանր տպաւորութիւն թողեց ամբողջ Բուլղարիայում։

Պետրովը ստանձնեց զինուորական մինիստրութիւնը։

ՄԱՆԻԼԼԱ.—Այստեղ ապստամբութիւն ծագեց։ Պատերազմական դրութիւն է հրատարակուած։

ԿԱՆԷ.— Մահմեդականների գործողութեան եղանակը Կանդիայում աւելի ու աւելի սպառնական է դառնում։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ. — Մտադրութիւն կայ ցուցահանդէսը շարունակելու մինչև հոկտեմբերի 1-ը, եթէ եղանակը թոյլ տայ։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՍԵՒ-ՔԱՂԱՔ, պ. Ս. Թ. Պօղ. Բ.-ին։ Ստուգեցինք և յայտնուեց, որ պ. Բ. Ա.-ի համարները մեզ ուղարկուած հասցէով անընդհատ ուղարկւում է. պօստից պահանջեցէք։

Կ. ՊՈԼԻՍ, Mars-ին։ Օգոստոսի 11-ին և 14-ին գրած Ձեր թղթակցութիւնները միասին ստացանք։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գնում ցերեկուայ 2 ժ. 30 ր., Թիֆլիս հասնում է առաւօտեան 8 ժ. 21 ր.։ Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան 9 ժ. 30 ր., Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գնում գիշերուա 11 ժ. 5 ր., Թիֆլիս հասնում է երեկոյեան 5 ժ. 50 ր., Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան 6 ժ 50 ր., Բաթում հասնում է առաւօտեան 8 ժ. 15 ր.։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում առաւօտեան 9 ժ. 40 ր., Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55ր., Թիֆլիսից Բագու դուրս է գնում գիշերուայ 10 ժ.50 ր., Բագու հասնում է ցերեկուայ 4 ժ. 40 ր.

Մարդատար № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ 11 ժ. ր., Թիֆլիս հասնում է ցերեկուայ 12 ժ. 25 ր.։ Թիֆլիսից Բագու դուրս է գնում ցերեկուայ 1 ժ. 10 ր. Բագու հասնում է առաւօտեան7 ժ. 30 ր.։

Մարդատար № 7 գնացքը Թիֆլիսից Բորժոմ դուրս է գնում ցերեկուայ 3 ժ. Բորժոմ հասնում էերեկոյեան 8 ժ. 35 ր։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Удостоившееся награды національной академіи земледѣлія, промышленности и торговли въ Парижѣ,
Письменное преподаваніе двойной бухгалтеріи на русскомъ и нѣмецк. языкахъ, вполнѣ замѣняющее устное преподаваніе. Масса благ. и отличн отзывовъ. Окончившимъ, по желанію, выдаются удостовѣренія объ изученіи предмета подъ моимъ руководствомъ. Преподаватель бухгалтеріи членъ національной академіи земледѣлія, промышленности и торговли въ Парижѣ,
А. Н. ЯНКОВСКІЙ
ВЪ РИГѢ.
Условія и подробныя письма высылаются безплатно
Предостерегаю отъ подражаній. Полная гарантія успѣха. Плата умѣренная.
(M.) 10—2

ТРЕБУЮТСЯ АГЕНТЫ для продажи выигрышныхъ билетовъ съ разсрочкой платежа и страхованію
Прос. адре банкирской конторѣ
СПБ. И. А. ШИФЪ, Гороховая, 13.
(M) 15—15.

ԼԱԲՈՒԼԷՒ
ՓԱՇԱՆ ՀՈՎԻՒ
(արևելեան զրոյց)
Թարգ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.
Վաճառ. բոլոր գրավաճ. 3—3

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ
ՊԱՏԱՀԱԿԱՆ
ԻՐԵՐ
կահ կարասիք, պատկերներ, զարդանօթներ, հնութիւններ, լիակատար կահաւորանք և այլն
Ա. ԳԵՆԿԷ ԵՒ ԸՆԿ.
МОСКВА
Пассажъ Солодовникова, ходъ съ Неглиннаго.
[M.] 6—2

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
SANTAL MIDY
Պարիզի դեղագործի պատրաստած, է թոյլատրուած է Ռուսիայում։ Նոր կապսիւլների մէջ պարունակւում են մաքուր սանտալի էսսէնցիա։
Պահեստն է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։
(M.) 33—17

ՓՈՐՁԵՑԷՔ ԼԱՒԱԳՈՅՆ
ՊԱՐՖԻՒՄԵՐ ՊԻԵՐԻ
ԻՒՄ-ԻՒՄ
ՍԱՊՈՆՈՎ
Եւ ուրիշ սապոնով չէք լուացուիլ։
ԳԻՆԸ 20 Կ. ԿՏՈՐԻ ՀԱՄԱՐ
Կարելի է ստանալ բոլոր դեղատներում, դեղատնային և պարֆիւմերային խանութներում։
Պահեստը Խարկովում, Պասաժ
Պ. ՈՒՆԱՆՈՎԻ մօտ
(M) 10—9

АЛЬДЕХИДЪ ВЛАДІО
КРЕМЪ
Ձեռին և դէմ-
քը փափկաց-
նելու համար
Главный складъ въ Москвѣ
Малый флак. 60 к.
Больш. флак. 1 р.
МОЖНО ПОЛУЧАТЬ ВЕЗДѢ.
(M) 32—32

Բարձր դասակարգի կանայք, ինչպէս և գեղեցկութեամբ ականաւոր դերասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈԼԴ-ԿՐԷՄԸ (Cold-Créme), որ դառնահամ է իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում CREME-SIMON (Կրէմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբեք չէ փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։
LA POUDRE SIMON (Պուդր Սիմոն) LE SAVON ALA CREME SIMON (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները։
I. SIMON., 13 rue Grande Bateiére, PARIS Ամեն-տեղ վաճառւում է դեղատներում, պարֆիւմերների և դեղագործների մօտ։
(M.) 15—15

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել փորձնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկաները սրանք են 1) Առևտրական Տնտեսութիւն 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և ռուսական), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մաքսային կանոնադրութիւն և Գեղագրութիւն, (վատ ձեռքի — почеркъ — ուղղելը)։
Ուսումն սկսւելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նաղովնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ., Ծավխանովների բանկային գրասենեակում կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—въ Тифлисъ, С. П Мануэльянцу.
(667) 25—17

ГУСТАВЪ ШТЫРМЕРЪ
20 коп.
50 коп.
П—А—Л—Ь—М—И—Р—А
ОДИНЪ КУСОКЪ
ПАЛЬМИРА
ТРИ КУСКА
ВАРШАВА
(M). 50—45

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ."
Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱ ՍԷՅԼ, երկու շաբաթը մի անգամ։
Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները
Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, 21 օգոստոսի (2 սեպտեմբերի «Սիրկասի
շոգենաւը, նաւապետ՝ Բուշէ։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական զիջման ունին
ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւններ
ստանալու համար դիմել՝
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանս. Դէորգ ազգ
ապւում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կալիբեմկինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։
656) 20—4

НАСТОЛЬНЫЙ
ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ,
изданіе Т-ва А. Гранатъ и Ко.,
ОКОНЧЕНЪ ПЕЧАТАНІЕМЪ
Цѣль изданія—въ сжатомъ изложеніи дать точныя и обстоятельныя свѣдѣнія по всѣмъ отраслямъ знанія и болѣе важнымъ вопросамъ жизни и тѣмъ содѣйствовать самообразованію и болѣе разностороннему развитію-
Въ „Настольномъ Энциклопедическомъ Словарѣ" приняли участіе: маг. И. Абельмамъ, проф, Д. Н, Анучинъ, губ агрон. В. Г. Бажаевъ, проф. П. Г. Виноградовъ, проф.-доц. П И. Вознесенскій, Д. С. Вольпинъ, маг М. Я. Герценштейнъ, маг. Вик А. Гольцевъ, инж. А, Н, Гранатъ, И. Н. Гранатъ, В. Н. Григорьевъ, прив.-доц. И. Я. Гурляндъ, инжен. А. М. Донде, Гр. А. Джаншіевъ, В. Е. Ермиловъ д-ръ Р. М. Жипунскій, инж. И. М. Зиновьевъ, Н. Н. Златовратскій, проф. Н П. Ивановскій, Н. Каменецкая, маг, А. И Каменка, Я. Н. Косубовскій, инж. В. Г. Крапивинъ, Ф. Лазурскій М. Е. Ландау проф. В. Ф. Левитскій, д-ръ М. Е. Ліонъ, прив.-доц. Л. Лосъ, проф. И, В, Лучицкій, прив.-доц. П. Н. Милюковъ, проф. С. А, Муромцевъ проф. В. А. Мякотинъ, проф. П. А. Некрасовъ, проф. В. М. Нечаевъ, М. М. Нечаевъ Викт. П. Острогорскій, проф. В. В. Пашутинъ, М. Л. Песковскій проф. Э. Ю. Петри М. В Познеръ, А. С. Пругавинъ, проф. Э. Л. Радловъ, А. С. Размадзе, М. Н, Ремезовъ, прив. доц, А, Р. Свирщевскій, прив.-доц. В. Д. Соколовъ, И. Н Сокулинъ, В, Стороженъ, Н. Г, Тарасовъ, проф. А. С, Тауберъ, маг. М, И. Туганъ-Барановскій, проф. Н, А.Умовъ, проф. А. Ѳ. Фортунатовъ, проф. О. Д. Хвольсонъ, проф. А, Чупровъ, проф, Щегловъ и. мн. др.
Все изданіе состовляетъ 8 томовъ (до 11000 столбцовъ убористой печати). Въ изданіи помѣщено 71890 статей и замѣтокъ, 1567 портретовъ и рисунковъ, 26 географическихъ картъ, 150 таблицъ рисунковъ, хромо-и олеографій. статистическихъ таблицъ и картограммъ. Первые шесть томовъ вышли третьимъ стереотипнымъ изданіемъ, 7-ой-вторымъ стереот. изд.
Цѣна изданію въ переплетѣ 42 р. безъ переплета 38 р.
ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧНА: при подпискѣ 5 руб., при полученіи шести томовъ 5 р., остальныя деньги выплачиваются ежемѣсячными взносами по 2 рубля
ПОДРОБНЫЕ ПРОСПЕКТЫ съ отзывами печати, выдержками изъ текста и условіями разсрочки высылаются по требованію БЕЗПЛАТНО. Главная Контора: Москва, Больш. Никитская, д. 5 (Рихтеръ) рядомъ съ университетомъ. 20—18

Тифлисъ Дов. цензурою 22-го Августа 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный до